ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը։—Ներսիսեան Դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնները։

Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը, որը կայացաւ ապրիլի 25-ին, ամենահետաքրքրական ընտրութիւնը կարելի է համարել սկսած 1879 թ. ընտրութիւնից դէս։ Սա այս տարուայ ընտրութիւնը խոստանում էր տեսել նոյնքան, որքան 1879-ինը։ Ինչ պատահեց այդ 1879 թուականին։ Քաղաքագլուխ Կիպիանին հրաժարուեց իւր պաշտօնից։ Դուման հաւաքուեց նոր քաղաքագլուխ ընտրելու։ Չ'աջողուեց։ Երկրորդ անգամ հաւաքուեցին՝ չ'աջողուեց։ Ձայների մեծամասնութիւնը ապահոված էր պ. Անդ. Ղորղանեանին։ Հրաժարուեց։ Վերջապէս, վերջնական ընտրութիւններում ձայների առաւելութիւնը ստացաւ կանդիդատներից մէկը, որը առաջարկուած էր միմիայն մի ձայնով։ Պր. Աղեքսանդր Մատինեանցը, չաղթեց նա, ում մասին ամենից քիչն էին մտածել։ Այդ լիշատակութեան արժանի օրից դէս, 12 տարուայ ընթացքում երեք անգամ վերստին ընտրուեց իւր պաշտօնի համար, որ ասել է թէ չորս անգամ ընտրուեց քաղաքագլուխ, վերջին անգամ ներկայ տարուայ լունուարի 13-ին։

Արդարև հրէական թիւ! պ. Մատինեանցը այս անգամ իւր դէմ դնուած տեսաւ մի ընդդիմադիր կուսակցութիւն, որը չը պիտի թոյլ տար նրան հանգիստ կենալու։ Այդ ընդդիմադիր կուսակցութիւնը, չէր պարզում ոչ մի ծրագիր, եթէ ծրագիր չը համարենք «վարչութեան անդամների փոփոխութիւնը»— обновленіе—մի խօսք որ նշանաբան էր ծառայում ընդդիմադրութեան համար։ Այդ խօսքը արդարև կունենար մի նշանակութիւն և իւր մէջ կ'ամփոփէր մի ծրագիր, եթէ միայն պարզորոշ լայտնի լինէին օպոզիցիայի կանդիտատների անունները և եթէ այդ նոր անունների հետ կապած լինէր մի անցած փառաւոր կամ գոնէ որոշ ուղղութեամբ գործունէութիւն։

Այդ բոլորից ոչինչ չը կար։ Օպոզիցիան պէտք է վրէժխնդիր լինէր իւր առաջուայ կանդիտատի—Զուբալովի—անաջողութեան համար։ Հրաժարուեց ընտրուած Մատինեանը՝—ինչ ուզի թող լինի—պէտք էր խանգա-

բել նաև պ. Պողոս Իղմայլեանի թեկնածութիւնը, թեկնածութիւնը այն մարդու, որը իւր ունեցած դիրքի համար դրեթէ բացառապէս պարտական է իւր անխոնջ աշխատութիւններին քաղաքի օգտին։ Դեռ ևս իբր քարտուղար քաղաքային դումայի—նա, որքան ինձ յայտնի է, շնորհիւ իւր մտաւոր և ոգեկան գերազանցութեան, մասնակից էր վարչութեան գործավարութեանը։ Դեռ ևս իբր դումայի քարտուղար—նա՝ վարչութեան ոգին էր։ Բնական է թէ ինչու քարտուղարութիւնից հրաժարուելով՝ նա ամենայն հեշտութեամբ ընտրեց վարչութեան անդամ և այն էլ վարչութեան առաջին անդամ, այսինքն քաղաքագլխի օգնական։ Այդ ոչ միայն աւելի բարձր, այլ և իւր ընդունակութիւնների համար աւելի լարմար պաշտօնում նա ցոյց տուեց դնահատելի և ոչ սովորական ձիրքեր։ Ես կ'ուզէի մի փոքր բնաորոշել այդ անձնաւորութիւնը և կամ, աւելի լաւն ասած, այդ մարդու տաղանդը։ Նորա մասին շատ խօսուեց այս վերջին ամսում. ճիշդ գաղափար սակայն չէր կարելի ստանալ այդ բոլոր ասածներից։

Ահա թէ ինչ է պ. Իղմայլեանը՝ մի պարլամենտական։ Այս խօսքով հասկանում են այն մարդուն, որը կարծես ստեղծուած է ժողովներում գործելու համար, իբր գործոն անդամ կամ ղեկավար մի կուսակցութեան։ Ոչ միայն իրանց բարձր ձգտումներով և մեծ կառավարչական խելքով են նոքա գերազանցում շատերից, այլ յայտնի ընդունակութիւններով՝ կուսակցութեան շահերը լաւ պաշտպանելու։ Դոքա բնաւորութեամբ ճկուն մարդիկ են, բայց այդ ճկունութիւնը չի տանում բուն պարլամենտականին դէպի սկզբունքների փոփոխութիւն, այլ միայն դէպի կոմպրոմիսներ՝ օգնութիւն ստանալու մտքով իւր սեպհական կուսակցութեան օգտի համար։ Դոքա անպայման չիտակներ չեն իրանց վարողութեան մէջ առհասարակ կուսակցութիւնների հետ. անկողդողդ ժայռեր չեն, ընդունակ են անդամ սոփեստութիւններ բանեցնելու իրանց դատը փաստաբանելու ժամանակ. միայն թէ հակառակորդին յաղթեն չօգուտ սեպհական կուսակցութեան—ահա նոցա մշտական տակտիկան։

Ճարպիկութիւնը այդպիսով մնում է նոցա գլխաւոր ոյժը, բայց ոյժ, որը անպատճառ միացած է լինում մի ուղղութեան հաւատարիմ մնալու հետ։ Նոքա մեծ մասամբ լաւ էլ ճառախօսներ են, բայց սակաւները միայն հասնում են հռետորականութեան, որի համար պահանջւում է վսեմ միտք, որից զուրկ են շատ պերճախօսներ։

Ես լաւ զգում եմ որ համեմատութեան համար մեծ չրջաններ եմ ընտրել, մինչդեռ ոչ Թիֆլիս քաղաքը և ոչ քաղաքային գործունէութիւնը և ոչ շատ ուրիշ պայմաններ թոյլ չեն տալիս որ ոյժերը այն զարգացումը և գործունէութիւնը այն ծաւալը ստանան, որ կարելի լինէր մեր մի գործիչին, մեր դումայի մէջ միշտ պտտողին հաւասարել մեծ հոսանքների մէջ չրջողներին։ Բայց ինչ փոյթ, իմ նպատակն է մի անձնաւորութիւն ճանաչել. ինձ հարկաւոր է գծերը որոշել, իսկ այդ համեմատութեան

մէջ, եթէ գծերը շատ են խոշոր երեւում, դորանով ճշդութիւնը չի վնասւում. բաւական է եթէ պրոպորցիան նոյնպէս յայտնի լինի. իսկ դա յայտնի է ամենքին։ Տեսնենք այժմ ինչով է պ. Իզմայլեանը համակրելի։

Լինելով կուսակցական անձնաւորութիւն, պ. Իզմայլեանը գլխաւորապէս համակրելի է իւր բնաւորութեան հիմնական գծերով։ Բնաւորութիւնով մի դեմոկրատ է նաև լեզուի, գրչի և միաժամանակ գործի մարդ, բաւականաչափ լայն հայեացքներով, որպէս զի նորա հայկականութեան մէջ տեղ գտնէր կոսմոպոլիտութեան ոգին, բայց և բաւականաչափ գրական մարդ, որպէս զի նորա ոգու կոսմոպոլիտական ուղղութիւնը չը խեղդէր տեղական ժողովրդի շահերը ըմբռնելու կարողութիւնը։

Եւ տեղական շահերին նուիրուած լինելը պ. Իզմայլեանի մէջ անպայման էր։ Դորանով էր նա թանկ ընդհանրութեան։

Պր. Իմայլեանի ընտրութիւնը ցանկալի էր մի քանի տեսակէտներից։ Նախ որ արժանի էր, իբր քաղաքի գործերին հմուտ և նուիրուած մարդ։ Երկրորդ՝ նորա ընտրութիւնը կ'ունենար մի բարոյական խրախուսիչ ազդեցութիւն. դորանով ցոյց կը տրուէր որ հասարակութիւնը գիտէ պատիւների արժանացնել նաև մշակ մարդուն. իսկ պ. Իզմայլեանը մշակ էր, բառիս ազնիւ մտքով։ Եւ մի այդպիսի օրինակ նամանաւանդ ցանկալի էր մի երկրում և մի քաղաքում, ուր ժողովուրդը շատ է սովոր ամեն պատիւ կապել մարդկանց անձնական կարողութեան և ախտղոնների հետ։

Բայց Իզմայլեանը ստացաւ միայն 30 ձայն ընդդէմ 32-ի։ Ընդդիմադիր կուսակցութիւնը այդ գործում տարաւ յաղթութիւնը. բայց նա տարաւ յաղթութիւն միայն պ. Իզմայլեանցի դէմ։ Մեծ խնդիր է թէ դորանով նա տարաւ արդեօք իւր սեպհական դատը, որովհետև ես հրաժարւում եմ կարծելուց, թէ նորընտիր քաղաքագլուխ իշխան Արղութեան-Երկայնաբազուկ լինէր այն անձը, որի համար կատարուած լինէր այս վերջին ամիսների աղմկալի վիճաբանութիւնը։ Ակներև է որ իշխան Արղութեանը, ապրիլի 25-ի նիստում, ընտրեց միմիայն իբրև մէկը, որ կուսակցութիւնների հետ չփումն չունի, իբրև մէկը, որ անձնական թշնամութիւն չունի դումայի մեծամասնութեան հետ. Դորանից շատերը եզրակացրին թէ իշխանը, կապ չունենալով կուսակցութիւնների հետ, անկախ լինելով դոցանից, կը կանգնի նաև կուսակցութիւններից բարձր։ Այդ կախուած է սակայն կուսակցութիւններից դուրս եղածի ոգեկան յատկութիւններից։ Անկասկած է որ մի այդպիսի անձն տրամադիր կը լինի բոլորովին անկախ մնալ. բայց բոլոր խնդիրը նորանումն է թէ որքան այդ կը յաջողի նրան։

Ամեն բան, ընդհակառակը, խօսում է յօգուտ այն ենթադրութեան, որ իշխան Արղութեանը, որպէս քաղաքի գործերից մինչ այժմ հեռու կեցած մարդ, և որպէս մէկը, որ մինչ իւր 47 տարեկան հասակը ոչ մի հասարակական գործում չի եղած, պէտք է բաւականանայ գրեթէ միայն նախագահելով դումայի ժողովները և ասպարէզը թողնի դումայի

կուսակցութիւններին։ Շատ և շատ կարելի է որ նա կուսակցական քաղաքագլուխ չի դառնալ, բայց ոչ թէ նոցանից բարձր կանգնելու, այլ միայն նոցանից մի կողմ քաշուելու համար։ Տարբերութիւնը ահագին է։ Մեծամասնութեան ղեկավար չի լինելու նա, այլ միայն մեծամասնութիւններին հետևող։ Մօտաւորապէս ճիշդ է դատում այդ կողմից ցայժմեայ օպոզիցիայի օրգան «Նովոե Օբոզրենիե» թերթը, որը սակայն միայն ինքը կարող է այդ հանգամանքի մէջ մխիթարութիւն և բարի նշան գտնել։ Իսկ ըստ իս, քաղաքագլուխը ոչ թէ մի պարլամենտի նախագահ է, որը միայն պէտք է ժողովում կարգ պահպանէ, այլ նա քաղաքի առաջին պաշտօնեան է։ Նա պաշտօնեայ է գործիչի մտքով, գործիչի, որի անձնական յատկութիւնները առաջնակարգ դեր պէտք է խաղան այն բարդ հասարակական գործի մէջ, որ յանձնուած է քաղաքային խորհուրդին։

«Մուրճ»-ի № 1, «Խմբագրութեան կողմից» մի հարց էր առաջարկուած, թէ արդեօք երբ պէտք է վերջապէս կատարուեն հոգաբարձական ընտրութիւնները Ներսիսեան Դպրոցի համար։ Այդ հարցը դրուեց այն պատճառով, որ ներկայ հոգաբարձութիւնը իւր չորս տարեայ իրաւասութիւնը լրացրել էր դեռ ևս անցեալ 1890 թուականին, իսկ նոր ընտրութիւնների համար կարգադրութեան մասին ինչ որ չէր լսւում ոչինչ։ Բայց ահա վերջապէս այդ կարգադրութիւնը արուեց ապրիլ ամսի սկզբներին, որով Թիֆլիսի ծխական ժողովուրդը հրաւիրեց ապրիլի 7-ին, կիւրակի օրը ծխական պատգամաւորներ ընտրելու հոգաբարձական ընտրութիւնների համար։

Որն է հիմնական կանոնադրութիւնը Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան համար? Մի երկու խօսքով որոշւում է այդ սահմանադրութիւնը։ Թիֆլիսի ամեն մի եկեղեցու ժողովուրդ ընտրում է երեք-երեք պատգամաւոր, ապա այդ բոլոր պատգամաւորները, թեմական առաջնորդի հրաւէրքով, որոշեալ օրը հաւաքւում են նիստի և, առաջնորդի նախագահութեամբ ընտրում են չորս տարեայ համար 12 հոգաբարձու և չորս էլ թեկնածուներ, անձնափոխանորդներ կամ կանդիտատներ, որոնք կոչւում են հոգաբարձական իրաւունք բանեցնելու ընտրուած հոգաբարձուների բացակայութեան կամ հրաժարուելու դէպքում։ Վերջապէս՝ ընտրուածների ցուցակը առաջարկւում է Վեհափառ կաթողիկոսից հաստատելու համար։

Այն հիմնական կանոնադրութիւնից դուրս՝ կան շատ խնդիրներ, ներկայ ընտրութիւններին վերաբերեալ, բայց նոքա մի անգամ առ միշտ որոշուած չեն և միշտ փոփոխւել են զանազան առաջնորդների օրերով և, ի հարկէ, ըստ իս լաւ է որ բոլոր խնդիրները բարձրագոյն հոգևոր կառավարութիւնից չը որոշւեն, որպէս զի դժւար չը լինի թեմական առաջնորդնե-

ին ընտրողական կանոնները ժամանակի պահանջների համեմատ փոփոխել։ Իրաւ շատ բաներ կան, որոնց թերութիւնները այսպէս ասած յաւիտենականանում են միմիայն այն պատճառով, որ նոցա փոխելը երկար ու բարակ պաշտօնական գրագրութիւնների տեղիք է տալիս։

Այսպիսով ուրեմն, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների համար կան մի կարգ խնդիրներ, որոնց վճռելը թողնւում է թեմական առաջնորդին։

Այդ խնդիրների մասին արած տնօրէնութիւնները կազմում են նիւթ առանձին հրահանգների։ Հրահանգը մտնում է ընտրողական գործի մանրամասնութիւնների մէջ։ Եւ ահա իմ առջև դրուած է մի թերթ այս վերնագրով «Հրահանգ յաղագս ընտրութեան պատգամաւորաց հոգաբարձական ընտրութեան Ներսիսեան հոգևոր (և աղգային) դպրոցի 7. ապրիլի 1891 ամի»։ Քննել հրահանգի կէտերը մամուլի պարտաւորութիւնն է։ Ես արդէն ասացի, որ դոքա հիմնական օրէնքներ չեն, այլ մասնաւոր կարգագրութիւններ են, որոնք միշտ փոխւում են և կարող են փոփոխուել։ Նոցա արժանաւորութիւնները և թերութիւնները կարող են առաջուց էլ իմացուել. բաւական էր եթէ «հրահանգը» կազմելու համար մի առանձին մասնաժողով կազմուէր՝ ընտրողական գործերին լաւ հմուտ մարդկանցից բաղկացած, և կամ վերջապէս հրահանգը այնքան ժամանակ առաջ հրատարակուած լինէր, որ մամուլը կարողանալ նորանով վաղօրօք զբաղուել և նկատած թերութիւնների վերաբերեալ իշխանութեան ուշադրութիւնը։ Բայց եղաւ հակառակը. հրահանգը հրատարակուեց ընտրութիւններից միայն մի երկու օր առաջ, և ես, մի ծխական՝ այդ հրահանգը կարդալու կարելիութիւն գտայ միմիայն ընտրութեան օրը և այն էլ հէնց ընտրելու ժամին։

Մթթէ այդ այդպէս պէտք է լինէր. և արժանի չէ՞ արդեօք որ իմ քննադատութիւնը հէնց այդ բանից սկսեմ։

Ես այժմ այլ ևս հարկաւորութիւն չունեմ ոչ թերս հաւաքել հրահանգի թերութիւնները ցոյց տալու համար. որովհետև, իբր մի եկեղեցու ծխական, արդէն մասնակցեցի ընտրողութեան, և բաւական է միայն թէ իմ եկեղեցում և թէ մեր եկեղեցիներում պատահած դէպքերից մի քանիսը ի նկատի առնեմ՝ և այն ժամանակ հրահանգը ինքն իրան դատած կը լինի։

Բայց նախ տեսնենք, թէ որոնք են հրահանգի կէտերը։ Ի հարկէ հարկ չը կայ որ անպատճառ գրաբառը արտագրեմ, ուստի թող աշխարհաբառ թարգմանութիւնը առաջ բերեմ։

1. Կարող են ընտրութեանը մասնակցել և ընտրել միմիայն ծխականները, իսկ ոչ ծխականները կարող են պատգամաւոր ընտրուել միայն այն դէպքում, երբ ծխականների մէջ չը գտնուեն նոյն պաշտօնի համար յարմարաւոր անձեր։

2. Ներսիսեան Դպրանոցի ուսուցիչների, վերակացուների և կապա

լառուների և առհասարակ դպրոցների աշակերտների մասնակցութիւնը արգելւած է։

3. Ընտրութիւնը պէտք է կանոնաւոր համարել, եթէ ժողովականների թիւը աւելի է քան բոլոր ցուցակագրւածների մի հինգերորդը։

4. Իւրաքանչիւր եկեղեցի պարտաւոր է ընտրել երեք պատգամաւոր, գաղտնի քւէարկութեամբ։

5. Ընտրութիւնը կատարւում է հսկողութեամբ նախագահ քահանայի և ներկայութեամբ միաբան քահանաների։

6. Ընտրութեան ժամին նախագահը, վաւերացնելով թւահամարեալ թերթիկները եկեղեցական կնքով կամ իւր ստորագրութեամբ՝ բաժանում է ժողովականներին, և, անունները գրելուց յետ՝ ժողովում է և համեմատում ընտրողների թւի հետ։

7. Իւրաքանչիւր տնից միայն մէկն է մասնակցում է ընտրութեանը։

Այս է հրահանգը, որ շատ թերի է։ Ես մատնանիշ կը լինեմ միայն մի երկուսի վերայ։

Հրահանգում ոչինչ չի ասւած թէ ովքեր են համարւում ընտրւածներ՝ նոքա, որոնք առհասարակ ամենից շատ ձայներն են ստացած, թէ նոքա, որոնք ստացած են ժողովականների մեծամասնութեան քւէները։ Ահա ձեզ 60 հոգուց բաղկացած մի ժողով, որը իւր քւէն տւել է՝ Կիրակոսին, Մաթոսին, Պետրոսին 25-ական ձայն, Թաթոսին, Պօղոսին, Կարապետին՝ 20—20 ձայն, ուրիշ երեք մարդկանց՝ 15-ական ձայն։ Որպէս տեսնում էք՝ ոչ ոք այդ քւէարկութեամբ չը ստացաւ մեծամասնութեան քւէները, քանի որ 60 հոգուց մեծամասնութիւնը գոնէ մէկով պէտք է կէսից աւելի լինի. իսկ 60-ի կէսը 30 լինելով, մեծամասնութիւն կարող են կազմել միայն 31 ձայն կամ աւելին, բայց ոչ դորանից պակասը։

Հրահանգի մէջ բացորոշ կերպով պէտք է ասել թէ որ տեսակ մեծամասնութեամբ են ընտրում պատգամաւորները՝ բացարձակ մեծամասնութեամբ (կէսից աւելի ձայներով թէ համեմատական մեծամասնութեամբ։ Եթէ որոշ ասւած լինէր՝ գուր տեղը ժողովներում վիճաբանութիւններ տեղի չէին ունենալ, ինչպէս այդ եղել է մի քանի եկեղեցիներում և զուտ կուսակցական ինստինկտները չէին արտայայտւիլ ալնպիսի վայրենիութեամբ, ինչպէս այդ տեղ-տեղ կատարւել է։

Եւ վերջապէս ժողովներում մարդիկ գալիս են ընտրութիւններ կատարելու և ոչ թէ օրէնքներ սահմանելու։ Եւ եթէ գոնէ մի ընդհանուր ժողով լինէր բոլոր եկեղեցիների ծխականների համար՝ դեռ կարելի կը լինէր ոչ պարզւած խնդիրները պարզել և վճռել այս կամ այն մտքով. բայց ինչպէս կարելի է թոյլ տալ որ ամեն մի եկեղեցում նոյն խնդիրների մասին առանձին վճիռներ կայացնեն. չէ թէ բոլոր ժողովներում միատեսակ կանոններով պէտք է ղեկավարւեն։

Հրահանգը ոչինչ չի ասում նաև թէ ընտրութիւնը միանգամ ա

քէչով է կատարում թէ երկու անգամով։ Ահա թէ ինչու մի եկեղեցում ծխականները հէնց մի անգամ թերթիկների վերայ ընտրելիների անունները գրելով են բաւականացել, իսկ միւս տեղերում պահանջւել է որ առաջ թերթիկներով առաջարկեն կանդիտատներ, որ իմացւեն ընտրելիների անունները, իսկ յետոյ նոցա համար, թէկուզ թերթիկներով, քւէարկութիւն կատարւի։ Զարմանալի չէ ուրեմն, որ ուր միանգամայ քւէարկութիւն է եղել (իսկ այդպէս է եղել գրեթէ ամենուրեք), պատգամաւորներ կան, որոնք ընտրւած են ժողովականների թւի միայն մի քառորդով!

Ես կարող էի այս քննադատութիւնը դեռ ևս շարունակել։ Այսքան էլ սակայն բաւական է այս անգամայ համար։ Էլ ես չեմ խօսում այն բանի մասին, թէ անկանոնութիւններ են տեղի ունեցել ընտրութիւնների ժամանակ նոյն իսկ այնպիսի կէտերում, ուր հրահանգը պարզորոշ է։ Օրինակ, հրահանգը պահանջում է ժողովի վաւերականութեան համար՝ ցուցակագրւած ծխականների առնւազը մի հինգերորդը։ Բայց իսկապէս, և ինչպէս երևում է բոլոր եկեղեցիներում, նայել են միայն թէ արդեօք առանձին տոմսակներով հրաւիրւածների մի հինգերորդը կայ թէ ոչ։ Կարծես թէ մասնակցելու իրաւունքը ամեն ծխականին չի պատկանում այլ միայն նրան, ումոր քահանաները բարեհաճել են առանձնապէս հրաւիրելու!

Ահա ինչպէս է պատահել որ մեծամասնաբար ընտրութիւնները կատարւել են առանց մասնակցութեան ծխականների գոնէ մի հինգերորդի, այլ ընտրութիւնները կատարւել են ծխականների թւի հինգերորդ մասից շատ աւելի քիչ ծխականների ձեռքով։

Եւ վերջ ի վերջոյ ինչ է դուրս եկել։ Մի եկեղեցի ունի դիցուք 300 ծխական։ Դոցանից քահանաները հրաւիրել են առանձին տոմսակներով միայն մի 60 հոգու, իսկ այս 60 հոգուց էլ իբր թէ ընտրւել են պատգամաւորներ մէկը որ ստացել է դիցուք միայն 20 ձայն, միւսը 15, երրորդը՝ 10 ձայն։ Ինքներդ դատեցէք!

ԼՈՒՍԻՆԻ